

ԳԱՂՈՒԹԻ ԿԵԱՆՔԷՆ

Լոս Անճելըսի Մէջ Պիտի Ճուցադրուի Փոլ Գալիքնեանի «Ուիլիերմ Սարոյեան. Մարդը, Գրագէտը» Ժապաւէնը

Լոս Անճելըսի մէջ առաջին անգամ բլլալով պիտի ցուցադրուի Փոլ Գալիքնեանի «Ուիլիերմ Սարոյեան. Մարդը. Գրագէտը» ժապաւէնը, որուն արտադրիչն ու բեմադրիչն է Մա-

շազգային Հինգ Մրցանակներու: Անցեալ Տուիսին Ֆիլատելֆիոյ Ֆիլմի Միջազգային Փառատօնին արժանացաւ Leigh Whipper Ոսկեայ Մրցանակին:

Այս ձեռնարկին մուտքի նուէրն է 10 տոյար, ուսանողներու Համար 7 տոյար: Ցաւելեալ տեղեկութիւններու Համար Հեռաձայնել (818) 794-7942 թիւին:

Փոլ Գալիքնեանի ծանօթութիւնը Սարոյեանի Հետ սկսած է 1964ին, երբ Գալիքնեան իրրել յուսանկարիչ ուզած է նկարել զինք: Այդ թուականէն ի վեր անոնք բարեկամներ դարձած են, իսկ Սարոյեանի կեանքի վերջին Հինգ տարիներուն անոնք մտերմացած են: Գալիքնեան մօտէն ուսումնասիրած ու Հետեւած է մեծ գրագէտի կեանքի զանազան Հանգրուաններուն:

Գալիքնեանի յուսանկարած Սարոյեանի նկարներէն մին ընտրուեցաւ իրրել դրոշմաթուղթ Միացեալ Նահանգներու եւ ՅորՀրդային Միութեան նամակատնային սպասարկութեան կողմէ: Այդ դրոշմաթուղթերը Հրապարակուեցան Մայիս 22, 1991ին, միաժամանակ Ֆրեզնոյի եւ Երեւանի մէջ: 1981ին, Սարոյեանի մահէն ետք, Գալիքնեանի յուսանկարներէն ոմանք Հրատարակուեցան մամուլի, գիրքերու եւ ամսագրերու մէջ:

Վաւերագրական այս ժապաւէնը կը սկսի Ֆրեզնոյի մէջ, եւ ինչպէս Սարոյեանի կեանքը եղաւ, կ'աւարտի միեւնոյն քաղաքին մէջ, 1981ին:



Ժապաւէնը կ'արժանանայ Leigh Whipper Ոսկեայ Մրցանակին

«Ես այս ժապաւէնը չպատրաստեցի գրած չաՀելու կամ Հոչակ ապաՀովելու Համար, այլ ուզեցի անմահացնել Սարոյեանի կեանքն ու գործը մեր սերունդին եւ գալիք սերունդներուն Համար», կ'ըսէ Գալիքնեան:

Գալիքնեան «Ուիլիերմ Սարոյեան. Մարդը, Գրագէտը» ժապաւէնը կը ցուցադրէ աշխարհի զանազան երկիրներուն մէջ եւ իր շրջագայութիւնը կ'ուզէ աւարտել Հասնելով Հայաստան:



Փոլ Գալիքնեան

րոյեանի վաղեմի ու մտերիմ բարեկամը՝ Փոլ Գալիքնեան:

Ձեռնարկը կազմակերպուած է Հ.Բ.Լ.Մ.ի կողմէ եւ տեղի պիտի ունենայ Միութեան Փաստփնայի Կեդրոնին մէջ, (2495 East Mountain Str.):

Աշխարհահռչակ Հայազգի գրագէտ Սարոյեանի կեանքին ու գործին նուիրուած այս վաւերագրական ժապաւէնին մէջ պատմիչն է Մայր Քանըրգ: Հոն կը խօսի նաեւ Սարոյեան ինքը, ներկայացնելով իր կեանքն ու գործը:

Ժապաւէնը արժանացած է մի-